Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Մուտքի հսկողության համակարգի վերանորոգման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» սեպտեմբերի 2016թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արման Ղուկասյան (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Համբարձումյան (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Ավետիք Ավագյան (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Սարգիս Արմենակյան (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

Հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Կարեն Մելքոնյանը՝ (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-03» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերի բացման մասին.

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի սեպտեմբերի 07-ին, ժամը 11:30-ին:

2.Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.

2.1 Գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

2.2 Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոսահամարը
1	«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ն. Տիգրանյան 27 Հեռ. (010)231520 (091)011619

2.3 Համակարգում 29.08.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1.1 «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

3.2.1 «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան: Մասնավորապես՝ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացված է հաստատված բնօրինակ փաստաթղթերից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հրավերի առաջին մասի 7.9 կետով սահմանված է. << Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ>>: Հաշվի առնելով, որ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, որի մասին նաև «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է իր կողմից ներկայացված <<Ընթացակարգին մասնակցելու դիմումում>>՝ Հավելված 1, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետև՝ Կարգ/ 35-րդ կետի 9-րդ ենթակետը՝ ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով և 45-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակցի առաջարկած գինն է՝

ՀՀ դրամ

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	1. «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Մուտքի հսկողության համակարգի վերանորոգման ծառայություններ	3607520	539055	4146575	829315	4975890

5. Հաշվի առնելով, որ սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված միակ հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին, հանձնաժողովը որոշեց.

ա) «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-03» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն,

բ) հաստատել «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-03» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արման Ղուկասյան

Անդամներ՝

_____ Կարեն Համբարձումյան

_____ Ավետիք Ավագյան

_____ Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-03> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-03

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-03» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

Չափաբաժին	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1	Մուտքի հսկողության համակարգի վերանորոգման ծառայություններ	«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	Մասնակիցը հայտը ներկայացրել է «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետև՝ Կարգ/ 35-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջների խախտմամբ: Մասնակցի հայտը մերժվել է՝ համաձայն Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի և 45-րդ կետի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010-511-787:
Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**